

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2-ՐԴ ԿԱՐԾԻՔ
Հաստատված մայիսի 12, 2006թ.

ՀԱԿԻՐԾ ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանը շարունակում է իրականացնել Շրջանակային Կոնվեցիայի կատարման վերաբերյալ պարտավորությունները: Ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց պաշտպանությունը բարելավելու ուղղությամբ կատարվել են մեծ թվով իրավական և համակարգված քայլեր, իսկ երկրում շարունակում է գերակշռել հանդուրժողականության համընդհանուր մթնոլորտը:

Մարդու իրավունքների Օմբուդսմենի պաշտոնի ստեղծումը կարևոր առաջադիմական քայլ է նաև ազգային փոքրամասնությունների համար: Ստեղծվել է նաև կրոնական հարցերի և էթնիկ փոքրամասնությունների գերատեսչություն՝ ազգային փոքրամասնությունների օգտին պետական քաղաքականության մշակումն ուժեղացնելու և ընդհանրապես ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց պահանջումների գիտակցումը մեծացնելու նպատակով:

Այնուամենայնիվ, մի քանի իրավական դրույթների պահանջներն իրականացնելու գործընթացում առկա են որոշ թերություններ, որոնք մասամբ պայմանավորված են տնտեսական պրոբլեմներով: Լրացուցիչ ջանքեր են անհրաժեշտ կրթության բնագավառում գոյություն ունեցող դժվարությունները հաղթահարելու, ինչպես նաև՝ հասարակական կյանքին ու ընտրովի մարմիններում մասնակցությունը, լրատվական միջոցների մատչելիությունն ապահովելու համար:

Կարևոր է նաև, որ ընթացիկ օրենսդրական նախաձեռնություններն այս տեսակետից հաշվի առնեն փոքրամասնության պաշտպանության ոլորտում գոյություն ունեցող չափորոշիչները:

I. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ	4
Վերահսկման գործընթաց	4
Ընդհանուր օրենսդրական և համակարգված կառուցվածք	4
Աջակցության քաղաքականություն և ազգային փոքրամասնությունների	4
Պայքարող խտրականություն	4
Կրթություն	5
Ազգային փոքրամասնությունների մասնակցությունը լրատվամիջոցներում.	5
Ազգային փոքրամասնությունների մասնակցությունը հասարակական կապերին և քննարկումներին.....	5
II. ՀՈԴՎԱԾ ԱՌ ՀՈԴՎԱԾ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ	6
Շրջանակային կոնվենցիայի հոդված 3	6
Շրջանակային կոնվենցիայի հոդված 4	9
Շրջանակային կոնվենցիայի հոդված 5	11
Շրջանակային կոնվենցիայի հոդված 6	12
Շրջանակային կոնվենցիայի հոդված 9	13
Շրջանակային կոնվենցիայի հոդված 10	14
Շրջանակային կոնվենցիայի հոդված 11	15
Շրջանակային կոնվենցիայի հոդված 12	16
Շրջանակային կոնվենցիայի հոդված 14	18
Շրջանակային կոնվենցիայի հոդված 15	20
Շրջանակային կոնվենցիայի հոդված 17	22
Շրջանակային կոնվենցիայի հոդված 18	22
III. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	23
Դրական զարգացումներ	23
Մտահոգող խնդիրներ	23
Հանձնարարականներ	24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2-ՐԴ ԿԱՐԾԻՔ

1. Խորհրդատվական կոմիտեն հաստատել է սույն կարծիքը Հայաստանի վերաբերյալ Շրջանակային կոնվենցիայի 26 (1) Հոդվածի և Նախարարների կոմիտեի 97 (10) **Բանաձևի** 23 կանոնի համաձայն: Եզրակացություններ արվել են 2004 թվականի Նոյեմբերի 24-ին ստացված Պետական երկրորդ զեկույցի (այսուհետև՝ Պետական Ձեկույցի), այլ գրավոր աղբյուրների և այն տեղեկությունների հիմամբ, որ Խորհրդատվական կոմիտեն ստացել է 2006 թվականի մարտի 28-ից 30-ը Երևան և Արագածոտնի մարզ այցելության ընթացքում կառավարական և ոչ կառավարական շփումների ընթացքում:
2. Առաջին բաժինը ներառում է Հայաստանում Շրջանակային կոնվենցիայի իրականացման կարևոր հարցերի վերաբերյալ Խորհրդատվական կոմիտեի հիմնական բացահայտումները: Այս բացահայտումներն ավելի մանրամասն արտացոլվում են հոդված առ հոդված բացահայտումներում, որոնք ներառված են 2-րդ բաժնում և ընդգրկում են Շրջանակային կոնվենցիայի այն դրույթները, որի վերաբերյալ Խորհրդատվական կոմիտեն բարձրացրել է առանցքային հարցեր:
3. Երկու բաժիններն էլ վկայակոչում են Շրջանակային կոնվենցիայի վերահսկման առաջին փուլի տված բացահայտումներն՝ ընդգրկված 2002 թվականի մայիսի 16-ին հաստատված Հայաստանի վերաբերյալ Խորհրդատվական կոմիտեի առաջին կարծիքում, և 2003 թվականի հունվարի 15-ին հաստատված Նախարարների կոմիտեի համապատասխան բանաձևում:
4. Երրորդ բաժնում ներառված եզրափակիչ դիտողությունները կարող են հիմք հանդիսանալ Հայաստանի վերաբերյալ Նախարարների կոմիտեի առաջիկա եզրակացությունների և հանձնարարականների համար:
5. Խորհրդատվական կոմիտեն ակնկալում է շարունակել իր երկխոսությունը Հայաստանի իշխանությունների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների և նրանց հետ, ովքեր ներգրավված են Շրջանակային կոնվենցիայի իրականացման մեջ: Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին՝ ստանալու պես հրապարակել սույն կարծիքը, որպեսզի այն նպաստի բազմակողմանի և թափանցիկ գործընթացին:

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՐԱՅՏՈՒՄՆԵՐ

Մոնիտորինգի գործընթաց

6. Հայաստանը դրական մոտեցում է որդեգրել Շրջանակային Կոնվենցիայի մոնիտորինգի գործընթացի նկատմամբ: 2003 թվականի հունիսին կազմակերպվել էր սեմինար ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և Խորհրդատվական կոմիտեի հետ՝ առաջին կարծիքում շարադրված եզրակացություններն իրականացնելու ուղիները քննարկելու նպատակով: Խորհրդատվական կոմիտեն գրառել է այն փաստը, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից մի քանիսը ներգրավվել են պետական զեկույցի նախապատրաստմանը: Ձեկույցի պատրաստման գործընթացի աշխատանքային խումբը կազմված է եղել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից և Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության աշխատակիցներից:

7. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այն փաստը, որ իր առաջին կարծիքը Նախարարների կոմիտեի բանաձևի և Շրջանակային Կոնվենցիայի տեքստի հետ միասին թարգմանվել է հայերեն և ռուսերեն լեզուներով և տարածվել ազգային փոքրամասնությունների շրջանում:

Համընդանուր օրենսդրական և համակարգված կառուցվածք

8. Խորհրդատվական կոմիտեի առաջին կարծիքի հաստատումից սկսած, Հայաստանը զարգացրել է ազգային փոքրամասնությունների պաշտպանության առընչությամբ իր օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակը: 2002 թվականի Մշակույթի մասին օրենքը ներառում է ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանմանն ուղղված դրույթներ, 2003 թվականին հաստատված նոր Քրեական օրենսգիրքն արգելում է ռասայական ատելության բորբոքումը: 2003 թվականին օրենքով ստեղծվեց Մարդու Իրավունքների Օմբուդսմենի պաշտոնը: 2004 թվականին Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության ստեղծումն ազգային փոքրամասնությունների համար պետական քաղաքականություն մշակելու կարևոր քայլ էր:

9. Ազգային փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ հատուկ օրենքի նախագծման գործընթացը, որն արդեն նախապատրաստման ընթացքում էր Խորհրդատվական կոմիտեի Հայաստան առաջին այցելության ժամանակ, շարունակվում է: Մեծ թվով փոքրամասնությունների ներկայացուցիչներ արտահայտել են մտահոգություններ օրինագծի մի քանի դրույթների վերաբերյալ: Խորհրդատվական կոմիտեն օրինագծի վերաբերյալ նախնական որոշումներ էր կայացրել իշխանությունների հետ և ողջունել է արտահայտած այն մտադրությունը, որը պահանջում է Շրջանակային Կոնվենցիայի սկզբունքներին օրինագծի համապատասխանության վերաբերյալ միջազգային մասնագետի եզրակացությունը:

Ազգային փոքրամասնություններին աջակցության քաղաքականությունը

10. Հայաստանը մեծացրել է իր աջակցությունն այն ծրագրերին, որոնց նպատակն է ազգային փոքրամասնությունների ինքնության, մշակույթի, ավանդույթների և լեզվի պահպանումը, չնայած երկրի դեռևս ծանր տնտեսական պայմանների հանգամանքին: Օրինակ, ազգային փոքրամասնությունների համար Երևանում հիմնվել է մշակութային կենտրոն: Այնուամենայնիվ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից շատերը դժգոհ են իրենց մշակույթը և լեզուն պահպանելուն ուղղված պետական աջակցության մակարդակից:

Պայքարող խտրականություն

11. Համընդանուր հանդուրժողականության մթնոլորտը շարունակում է գերակշռել Հայաստանում և էթնիկ պատկանելության վրա հիմնված պարբերական խտրականություն չկա: Երկար ուշացումից հետո Մարդու Իրավունքների Օմբուդսմենի ինստիտուտի ստեղծումը Հայաստանի համար շրջադարձային էր: Օմբուդսմենի գրասենյակը դարձել է կարևոր իրավական պաշտպանության միջոց քաղաքացիների, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար, ինչպես նաև՝ մարդու իրավունքների և փոքրամասնության

իրավունքների վերաբերյալ գիտակցությունը բարձրացնող աղբյուր: 2003 թվականի Քրեական նոր օրենսգրքում ներկայացված փոփոխությունները նույնպես մեծացրել են ռասայական ատելության դեմ պայքարելու հնարավորությունները:

Կրթություն

12. Կրթությունն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մեջ խորհրդատվական կոմիտեի կողմից հանդիպած հիմնական մտահոգության խնդիրն է և իշխանությունները, առաջին կարծիքից հետո, նոր քայլեր են ձեռնարկել՝ բավարարելու ազգային փոքրամասնությունների կրթական պահանջունքները: Դպրոցում եզդիերեն, քրդերեն և ասորերեն լեզուների դասավանդումը կատարելագործվել է այն բնակավայրերում, որտեղ ապրում են այս ազգային փոքրամասնությունները ներկայացնող մեծ թվով մարդիկ: Այնուամենայնիվ, կան թերություններ ազգային փոքրամասնությունների լեզվով դասագրքերի և այլ գրականության որակի ապահովման, ինչպես նաև՝ ուսուցիչների վերապատրաստման և նախադպրոցական կրթության ոլորտում:

13. Որոշ ազգային փոքրամասնությունների շրջանում կրթությունից դուրս մնացած աղջիկների տոկոսը բավականին բարձր է:

14. Իշխանությունները միջոցներ են ձեռնարկել, որպեսզի փոքրամասնության կրթությունը զերծ մնա դպրոցներում ընթացող ռացիոնալացման գործընթացից՝ տալով փոքրամասնության կրթությանը դպրոցներին պաշտպանված դպրոցի կարգավիճակ, և կիրառելով 30 աշակերտի դեպքում փոքրամասնության լեզվի ուսուցմամբ դասարան բաց անելու արտոնություն: Ռացիոնալացման գործընթացը կարող է դեռ բացասական հետևանքներ ունենալ չպաշտպանված դպրոցներում փոքրամասնության կրթության վրա:

15. Մի քանի ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձինք ռուսերենը համարում են որպես իրենց նախընտրած փոքրամասնության լեզու և կցանկանային, որ ռուսերենը շարունակի օգտագործվել որպես իրենց երեխաների կրթության լեզու: Կարևոր է, որ Հայաստանում կրթության նկատմամբ շահախնդիր հետաքրքրությունը պահպանվում է, հետևաբար այն չի ներգործի իրենց նախընտրած փոքրամասնության լեզուն պահպանելու ջանքերի վրա:

Լրատվամիջոցները և Ազգային փոքրամասնությունների մասնակցությունը

16. Չնայած առաջին վերահսկման փուլից սկսած որոշ առաջընթացին, փոքրամասնության լեզուների առկայությունը լրատվամիջոցներում դեռ սահմանափակ է, հատկապես հեռուստատեսությունում: Մնացել են իրավական սահմանափակումներ հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակվող փոքրամասնությունների լեզուներին տրամադրված ժամաքանակի համար:

Հասարակական հարաբերություններին և քննարկումներին ազգային փոքրամասնությունների մասնակցությունը

17. Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ ներկայացված են տեղական ընտրովի մարմիններում, մասնավորապես՝ այն տարածքներում, որտեղ նրանք ապրում են մեծ քանակով, բայց նրանց համար դժվար է մուտք գործել ազգային ընտրովի մարմիններ:

18. Իշխանությունների և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների միջև կապը երբեմն դժվար է, չնայած խորհրդակցական մարմինների, օրինակ Ազգային փոքրամասնությունների Համակարգող խորհրդի, առկայությանը: Փոքրամասնությունների ներկայացուցիչները մտահոգված են փոքրամասնությունների հետ հաղորդակցության ուղիները սահմանափակելու փորձերով, մասնավորապես «Հայաստանի Հանրապետության ազգությամբ ոչ հայ քաղաքացիների և էթնիկ փոքրամասնությունների վերաբերյալ» օրինագծի համատեքստում:

Շրջանակային կոնվենցիա հոդված 3

Շրջանակային կոնվենցիայի կիրառման անհատական մակարդակը

Առաջին փուլի բացահայտումներ

19. Առաջին կարծիքում Խորհրդատվական կոմիտեն նշել էր, որ ազգային փոքրամասնության վերաբերյալ կար որոշ անորոշություն, մասնավորապես այն խմբերի համար, որոնք չունեին ներկայացուցիչ կազմակերպություններ:

20. Խորհրդատվական կոմիտեն հաշվի էր առել քրդերի և եզդիների ազգային պատկանելության մասին տարածայնությունը:

21. Վերջապես առաջարկվում էր, որ Հայաստանի իշխանությունները դիտարկեն Շրջանակային կոնվենցիայի հոդված առ հոդված կիրառումը այլ խմբերը ներկայացնող անձանց, այդ թվում՝ ոչ քաղաքացիների նկատմամբ:

Ներկա իրավիճակ

ա) Դրական զարգացումներ

22. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է Հայաստանի իշխանությունների ներառական մոտեցումը՝ արտահայտված Շրջանակային կոնվենցիայի կիրառման վերաբերյալ Խորհրդատվական կոմիտեի առաջին կարծիքի մեկնաբանություններում, մասնավորապես՝ կոնվենցիայի կիրառումը ոչ քաղաքացիների նկատմամբ անհատական մակարդակի վրա: Խորհրդատվական կոմիտեն նաև քննարկել է Հայաստանի Սահմանադրության նախկին 37-րդ հոդվածի փոփոխությունը որպես դրական քայլ (2005 թվականի հաջորդող Սահմանադրության բարեփոխման 41-րդ հոդվածը), համաձայն որի իրենց ավանդույթները, կրոնը, լեզուն և մշակույթը պահպանելու և զարգացնելու սահմանադրական իրավունքից օգտվել կարող են ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձիք և ոչ միայն քաղաքացիները:

23. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է իշխանությունների այն տեսակետը, համաձայն որի ինքնանույնացման սկզբունքը պետք է գերակշռի քրդերի և եզդիների էթնիկական պատկանելության վերաբերյալ ընթացող բանավեճի համատեքստում: Խորհրդատվական կոմիտեն նշել է, որ եզդի առաջնորդներից մի քանիսը, որոնց հանդիպել է Հայաստան այցելության ժամանակ, ենթադրում են, որ եզդիների կրոնական, էթնիկական և լեզվական պատկանելիությունը տարբերվում է քրդերից, մինչդեռ քուրդ առաջնորդները հայտարարում են, որ եզդիները և քրդերը կիսում են միևնույն էթնիկական պատկանելությունը և լեզուն, և որ եզդի տերմինը սահմանում է միայն կրոնը:

բ) Խնդիրներ

24. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ վերահսկման առաջին փուլի ընթացքում Շրջանակային կոնվենցիայի կիրառման մեջ ընդգրկված 11 ազգային փոքրամասնություններ ունեին ներկայացուցչական կազմակերպություններ և քվե Ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդում: Համաձայն Խորհրդատվական կոմիտեին ներկայացված տեղեկության, Հայաստանում կան այլ էթնիկական ծագման անձիք, հատկապես՝ քիչ թվով գնչուներ և ադրբեջանցիներ, ովքեր ներկայումս չեն ընդգրկված Շրջանակային կոնվենցիայի կիրառման շրջանակում: Չնայած այս անձիք հետաքրքրություն չեն ներկայացրել Շրջանակային կոնվենցիայի պաշտպանությունից օգտվելու հանդեպ, Խորհրդատվական կոմիտեն քննարկել է, որ այս պաշտպանությունը պետք է հասանելի լինի նրանց, և նրանք հետագայում թերևս կխնդրեն այն:

Հանձնարարականներ

25. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է Հայաստանի իշխանություններին՝ պահպանելու իրենց ռազմավարությունը Շրջանակային կոնվենցիայի կիրառման առնչությամբ և շահագիգիռ անձանց հետ խորհրդակցելուց հետո քննարկելու այլ խմբեր ներկայացնող անձանց նկատմամբ Շրջանակային կոնվենցիայի կիրառման հավանականությունը, այդ թվում՝ ոչ քաղաքացիների:

«Հայաստանի Հանրապետության էթնիկ փոքրամասնությունների և ազգությամբ ոչ հայ քաղաքացիների վերաբերյալ» օրենքի նախագիծը

Առաջին փուլի բացահայտումներ

26. Խորհրդատվական կոմիտեն իր առաջին Կարծիքում բացահայտել էր, որ կարևոր է ստեղծել մի իրավական համակարգ, որը կկարողանա ազգային փոքրամասնություններ ներկայացնող անձանց համար ապահովել համապատասխան պաշտպանություն, շահագիգիռ անձանց հետ խորհրդակցելուց հետո:

Ներկա իրավիճակ

ա) Դրական զարգացումներ

27. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ «Հայաստանի Հանրապետության էթնիկ փոքրամասնությունների և ազգությամբ ոչ հայ քաղաքացիների վերաբերյալ» օրենքի նոր նախագծի (այսուհետև՝ որպես փոքրամասնությունների մասին օրենքի նախագիծ) պատրաստվել է ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության կողմից և իշխանությունները նշել են իրենց մտադրությունը ներկայացնելու այն Եվրոպայի Խորհրդին փորձագիտական եզրակացության համար՝ համապատասխանեցնելու միջազգային չափորոշիչներին: Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այն փաստը, որ փոքրամասնության ներկայացուցիչներն սկզբնական փուլում ընդգրկված են եղել օրենքի նախագծի տեքստի պատրաստմանը:

բ) Խնդիրներ

28. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդում ներգրավված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մեծ մասն արտահայտել են դժգոհություն օրենքի նախագծի նկատմամբ և այլևս դեմ են ազգային փոքրամասնությունների վերաբերյալ օրենսդրության ընդունմանը: Իրենց կարծիքով, ընթացիկ օրինագիծը առկա իրավիճակի մեջ որևէ դրական փոփոխություն չի բերում:

29. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ օրինագիծը փոքրամասնությունները ներկայացնող անձանց էթնիկ պատկանելությունը պաշտպանելու և բարձրացնելու համար ընդգրկում է քաղաքացի լինելու չափանիշը: Խորհրդատվական կոմիտեն քննարկել է, որ այսպիսի ռազմավարությունը համապատասխան չափով չի արտացոլում անկեղծության և ճկունության ոգին՝ պահանջված երրորդ հոդվածի և Շրջանակային կոնվենցիայի այլ դրույթներով: Ենթադրվում է, որ քաղաքացիության չափանիշը օրինական պահանջ է որոշ ոլորտների համար, այնպիսին, ինչպիսին է ներկայացուցչությունը խորհրդարանում, բայց դրա կիրառումը կարող է առաջացնել խնդիրներ այն դրույթների վերաբերյալ, որոնք ներառված են Շրջանակային կոնվենցիայիով ընդգրկված այլ կարևոր ոլորտներում, այնպիսին, ինչպիսին է՝ ոչ խտրականությունը և հավասարությունը:

30. Խորհրդատվական կոմիտեն նշում է նաև, որ օրենքի նախագիծը այնպես, ինչպեսին հիմա է, ներառում է «Ազգությամբ ոչ հայ քաղաքացիներ» և «էթնիկ փոքրամասնություններ» հասկացությունների սահմանումը: «Ազգությամբ ոչ հայ քաղաքացիների» և «էթնիկ փոքրամասնությունների» միջև տարբերությունը ներկայացնում է պաշտպանության երկու տարբեր մակարդակ: Էթնիկ փոքրամասնություն լինելու պայմանները հետևյալն են. պատկանել մի որևէ խմբի, որը բաղկացած է նվազագույնը դիսպերս բնակեցված 3000 մարդուց, կամ լինել նվազագույնը 2000 բնակիչներ ունեցող համայնքներում և կազմել բնակչության նվազագույնը

15%, կամ կազմել նվազագույնը 300 մարդուց բաղկացած բնակավայրի մեծամասնությունը և ապրելիս լինեն Հայաստանում նվազագույնը 50 տարի: Նրանք, ովքեր չեն համապատասխանում այս չափանիշներին և չեն պատկանում բնակչության մեծամասնությանը, կհամարվեն «Ազգությամբ ոչ հայ քաղաքացիներ» և կօգտվեն տարբեր երաշխիքներից, քան «Էթնիկ փոքրամասնությունները» ներկայացնող անձիք: Խորհրդատվական կոմիտեն այն կարծիքին է, որ այս տարբերությունը կարող է ավարտվել մարդկանց կամ խմբերի անարդարացի տարբերակմամբ: Չնայած իշխանությունների կողմից արտահայտած մտադրությունը չի զրկում մարդկանց կամ խմբերին օրինագծի պաշտպանությունից, Խորհրդատվական կոմիտեն հայտնում է իր կարծիքը առ այն, որ այս տարբերությունը անհրաժեշտ է վերանայել, հաշվի առնելով Շրջանակային կոնվենցիայի սկզբունքները:

31. Բացի այդ, Խորհրդատվական կոմիտեն հիշատակել է, որ օրինագիծն օգտագործում է «Մայրենի լեզու» տերմինը, երբ այն վերաբերում է լեզվական պատկանելության պահպանությանը: «Մայրենի լեզու» տերմինը չի օգտագործվում Շրջանակային կոնվենցիայում: Այս տերմինի օգտագործումն օրենքում կարող է պրոբլեմներ առաջացնել այն անձանց համար, ովքեր նախընտրում են ռուսերենը որպես իրենց փոքրամասնության լեզու, և ովքեր չեն ներկայացնելով ռուս փոքրամասնությունը, ցանկանում են, որ իրենց երեխաները կրթություն ստանան այս լեզվով: Այս տեսակետից Խորհրդատվական կոմիտեն ընդգծում է, որ ինքնանույնացման սկզբունքը պետք է նաև կիրառվի յուրաքանչյուրի փոքրամասնության լեզվի ընտրության հարցում /տես նույնպես դիտողություններ 14 հոդվածի վերաբերյալ/:

Հանձնարարականներ

32. Կարևոր է, որ իշխանությունները կազմակերպեն քննարկումներ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ՝ համաձայնության գալու փոքրամասնությունների օրենքի նախագծում ամրագրված հիմնական սկզբունքներում:

33. Իշխանությունները պետք է փոքրամասնության պաշտպանության ոլորտում ապահովեն օրինագծի համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին: Խորհրդատվական կոմիտեն ողջունում է Հայաստանի իշխանությունների կողմից Շրջանակային կոնվենցիայի սկզբունքներն օրենքի նախագծին համապատասխանեցնելու վերաբերյալ միջազգային փորձագիտական եզրակացություն ստանալու մտադրությունը:

34. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում Հայաստանի իշխանություններին երաշխավորել, որ փոքրամասնությունների օրենքի նախագծի ընդգրկված դրույթները հակառակ չեն Հայաստանի իշխանությունների կողմից մոնիտորինգի առաջին փուլի համատեքստում հայտարարված գործողությունների ծրագրին: Մասնավորապես, հետագայում նրանք պետք է Շրջանակային կոնվենցիայի կիրառման մեջ ապահովեն այլ խմբերի հնարավորությունները, ներառյալ՝ ոչ քաղաքացիների: Նրանք պետք է նույնպես ապահովեն, որ օրինագծի դրույթները լրացուցիչ տարածանություններ չառաջացնեն Շրջանակային կոնվենցիայի պաշտպանությունից օգտվող տարբեր մարդկանց կամ խմբերի վերաբերմունքում:

Շրջանակային կոնվենցիա, հոդված 4

Պայքարող խտրականություն և օժանդակող հավասար հնարավորություններ

Առաջին փուլի բացահայտումներ

35. Իր առաջին կարծիքում Խորհրդատվական կոմիտեն կոչ էր անում Հայաստանի իշխանություններին ստեղծել Մարդու իրավունքների Օմբուդսմենի ինստիտուտ:

36. Առաջարկվում է նաև հակախտրականության օրինագծի իրականացման ավելի սիստեմատիկ վերահսկում:

37. Եվ վերջապես, ենթադրվում է, որ իշխանությունները պետք է ջանք չխնայեն լրացուցիչ միջոցների կիրառմամբ ապահովելու ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց

կրթության, մշակույթի և հասարակական կյանքի մասնակցության ոլորտում ամբողջական և արդյունավետ հավասարություն:

Ներկա իրավիճակ

ա) Դրական զարգացումներ

38. Մարդու իրավունքների առաջին Օմբուդսմենը նշանակվել էր 2003 թվականին: Իր լիազորությունների ընթացքում /2003 թվականից 2006 թվականի փետրվար/ Օմբուդսմենը հատուկ ուշադրություն է դարձրել խտրականության հարցերին, ներառյալ ազգային հողի վրա հիմնված խտրականությանը, որպեսզի մեծացնի ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց հավասար վերաբերմունքի օգտին դրական միջոցների օժանդակման պահանջումների գիտակցումը: Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այն փաստը, որ չնայած սահմանափակ միջոցներին, Օմբուդսմենի գրասենյակը հատուկ ուշադրություն էր դարձրել ազգային փոքրամասնությունների անդամների դեմ հնարավոր բռնություններին, այդ թվում կանխարգելիչ գործողությունների միջոցով: Խորհրդատվական կոմիտեն նույնպես հանձնարարել է անձնակազմում ներառել փոքրամասնության ծագում ունեցող անձանց:

39. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այն փաստը, որ Ձովունիում եզրի համայնքը, բախվելով իրենց կարգավիճակի օրինականացման առնչությամբ խնդիրների, դրդել է իշխանություններին միջոցներ ձեռնակել լուծելու խնդիրը, որոնք հաջորդել են Օմբուդսմենին ներկայացված բողոքին:

40. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այն փաստը, որ 2003 թվականին ընդունված նոր Քրեական օրենսգիրքը որպես հանցանք է ընդունում ռասայական ատելության բորբոքումը:

բ) Խնդիրներ

41. Խորհրդատվական կոմիտեն կիսում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մեծամասնության անհանգստությունն առ այն, որ ՀՀ կառավարության կողմից տրամադրվող օժանդակությունը շատ փոքր է՝ որպեսզի ապահովվի հասարակական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության հավասար հնարավորությունները: /տես նույնպես մեկնաբանություններ հողված 15-ի վերաբերյալ/:

42. Խորհրդատվական կոմիտեի ուշադրությունը հրավիրվել է նաև հողի սեփականաշնորհման ընթացքում տեղի ունեցած խտրականությանը, հատկապես եզրիների առնչությամբ:

43. Խորհրդատվական կոմիտեին տեղեկացրել են, որ եզրիների դեպքում գոյություն ունի սոցիալական նպաստների և զբաղվածության մատչելիության խտրականություն, չնայած նշվում էր, որ չկա ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց ոչ մի պարբերական հեռացման օրինակ աշխատաշուկայից կամ սոցիալական նպաստներից: Որոշ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ ցանկություն են հայտնել տեսնելու աշխատաշուկայում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին ընդգրկելու վերաբերյալ պոզիտիվ տեղաշարժեր:

44. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ էթնիկ ծագման հիման վրա ստեղծված տվյալների բազա չկա, մասնավորապես ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ տվյալները սակավ են, ինչը խոչընդոտում է փոքրամասնությունների նկատմամբ տեղեկացված և արդյունավետ պետական քաղաքականություն մշակելուն: Այնուամենայնիվ, Հայաստանում չկա ոչ մի պաշտոնական խոչընդոտ այդպիսի տվյալների հավաքման համար, և 2001 թվականի մարդահամարի տվյալների արդյունքները ազգությամբ դասակարգված որոշ տեղեկություններ է պարունակում: Խորհրդատվական կոմիտեի հետ հանդիպման ժամանակ վիճակագրական մարմինները ընդունել են ազգային փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական և կրթական տվյալների վիճակի մասին լրացուցիչ տվյալների հավաքման անհրաժեշտությունը պետական քաղաքականություն մշակելու նպատակով, մասնավորապես՝ եզրիների դեպքում:

Հետաքրքրությամբ նշվում է նաև, որ փոքրամասնությունների վերաբերյալ օրինագիծը քննարկում է էթնիկ փոքրամասնությունների մասին տեղեկատվության հավաքման հնարավորությունը և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ սահմանված բոլոր կանոնները պահպանվում են:

Հանձնարարականներ

45. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին՝ ապահովելու Օմբուդսմենի գրասենյակը լրացուցիչ միջոցներով: Խրախուսվում է նաև, որ նոր նշանակված Օմբուդսմենը շարունակի հատուկ ուշադրություն դարձնել ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց իրավունքների հնարավոր խտրականությանը և բռնություններին:

46. Չնայած խտրականության գրանցված դեպքերի սահմանափակ քանակին, Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին այս առումով շարունակելու իրավիճակի մանրակրկիտ վերահսկումը: Իշխանություններին խրախուսվում է շարունակել ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց իրազեկվածության բարձրացումը իրենց իրավունքների և խտրականության դեպքերին առնչվող առկա իրավական պաշտպանության միջոցներին:

47. Խորհրդատվական կոմիտեն պահանջում է իշխանություններից աչալուրջ լինել խտրականության հնարավոր դեպքերի առնչությամբ: Հողի սեփականաշնորհման գործընթացում խտրականության հայտարարությունները նույնպես պետք է մանրակրկիտ ուսումնասիրվեն:

48. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին՝ ուղղելու իրենց ջանքերը փոքրամասնության հիմնական խնդիրներին առնչվող պետական քաղաքականության մշակմանը, հատկապես՝ կրթությանը, որպեսզի արդյունավետ միջոցներ ապահովվեն ազգային փոքրամասնություններ ներկայացնող անձանց հավասար հնարավորություններին: Խրախուսում է նաև դրական միջոցներ ձեռնարկել՝ ի նպաստ ազգային փոքրամասնությունների, ներառյալ՝ աշխատաշուկայի մատչելիության խնդիրը:

49. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին՝ ձեռնարկելու ազգային փոքրամասնությունների վերաբերյալ լրացուցիչ վիճակագրական տվյալների հավաքագրում, որպեսզի հեշտացնի ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց հանդեպ արդյունավետ դրական միջոցների ձևավորումը:

Շրջանակային կոնվենցիա, հոդված 5

Ազգային փոքրամասնություններին աջակցելու քաղաքականություն

Առաջին փուլի բացահայտումներ

50. Իր առաջին կարծիքում Խորհրդատվական կոմիտեն նշել էր, որ իշխանությունները պետք է լրացուցիչ ջանքեր գործադրեն փոքրամասնությունների մշակույթի և ինքության պահպանման ու զարգացման համար, այդ թվում՝ աջակցելով ազգային փոքրամասնությունների համար մշակութային կենտրոնի ստեղծմանը:

51. Բացահայտվել է նաև, որ մշակույթի ոլորտում որոշ ինստիտուցիոնալ և իրավական միջոցներ նախատեսված են ազգային փոքրամասնություններին աջակցություն ցույց տալու համար, որոնք պետք է իրականացվեն ժամանակին շահագրգիռ անձանց հետ խորհրդակցելուց հետո:

Ներկա իրավիճակ

ա) Դրական զարգացումներ

52. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է 2002 թվականի Մշակույթի մասին օրենքի դրույթները, որի նպատակն է ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության

պահպանումն ու զարգացումը: Հաշվի է առնվել ազգային փոքրամասնությունների բազմաթիվ մշակութային և գեղարվեստական նախաձեռնություններին ցույց տրված աջակցությունը: Եվ վերջապես, ողջունվել է այն փաստը, որ 2005-2008 թվականների համար փոքրամասնության մշակույթները կազմում են ազգային մշակութային քաղաքականության ծրագրի մաս:

53. Խորհրդատվական կոմիտեն նշում է 2004 թվականին Երևանի կենտրոնում Կառավարության կողմից կառույցի հատկացումը, որն օգտագործվելու է փոքրամասնությունների համար որպես մշակութային կենտրոն: Խորհրդատվական կոմիտեն հուսով է, որ կենտրոնը շուտով կգործի:

բ) Խնդիրներ

54. Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները տեղեկացրել էին Խորհրդատվական կոմիտեին, որ իրենց կարծիքով՝ մշակութային և գեղարվեստական միջոցառումների համար ֆինանսավորումները և այլ օգնության ձևերը, որոնց նպատակն է պահպանել իրենց մշակույթը և ինքնությունը, անբավարար է: 2001 թվականից սկսած ամեն տարի դրամական միջոցներ են հատկացվել ազգային փոքրամասնություններին Ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդի միջոցով և հավասար բաժանվել 11 ազգությունների միջև, որն ըստ որոշ ներկայացուցիչների՝ անարդարություն է թվաքանակով ամենամեծ փոքրամասնությունների նկատմամբ:

Հանձնարարականներ

55. Չնայած շարունակվող տնտեսական դժվարություններին, որի առջև կանգնած է Հայաստանը, Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին՝ սերտ համագործակցելով փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ օժանդակելու փոքրամասնության մշակույթների զարգացման և պահպանման համար աջակցող ծրագրերին և հատկացնել օգնություն տարբեր խմբերի կարիքներին համապատասխան:

Պայքարող ռասայական խտրականություն և անհանդուրժողականություն

Առաջին փուլի բացահայտումներ

56. Խորհրդատվական կոմիտեն բացահայտել էր, որ հանդուրժողականության ոգին և երկխոսությունը գերակշռում է Հայաստանում ապրող էթնիկական խմբերի միջև: Այնուամենայնիվ, քննարկվում էր, որ իշխանությունները պետք է նպատակաուղղեն իրենց ջանքերը՝ բարելավելու կրոնական երկխոսությունը և հանդուրժողականությունը:

57. Խորհրդատվական կոմիտեն նշել էր, որ եզրի ազգային փոքրամասնությունը ներկայացնող անձանց դեմ կա հատուկենտ խտրական վերաբերմունք: Խորհրդատվական կոմիտեն խրախուսում էր իշխանություններին կանխել այդպիսի վերաբերմունքը և տուժածներին ապահովել համապատասխան պաշտպանությամբ:

Ներկա իրավիճակ

ա) Դրական զարգացումներ

58. Խորհրդատվական կոմիտեն գոհունակությամբ նշում է, որ հանդուրժողականության համընդանուր մթնոլորտը շարունակում է գերակշռել Հայաստանում և գրանցվել են միայն խտրականության մի քանի դեպքեր: Նշվում է նաև, որ Օմբուդսմենը իր լիազորության ընթացքում ստացել էր միայն 5 բողոք ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանցից՝ իրենց նկատմամբ էթնիկ հողի վրա ցուցաբերված խտրականության վերաբերյալ: Դրանցից շատերը վերաբերում էին եզրի համայնքը ներկայացնող անձանց:

59. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է 2004¹ թվականին իշխանությունների անհապաղ արձագանքը հակասեմիտականության հանրային արտահայտության գրանցված փաստին:

բ) Խնդիրներ

60. Խորհրդատվական կոմիտեն տեղեկացվել է, որ եզրիները վատ վերաբերմունքի ենթարկվում են ավելի շատ զինվորական ծառայության ընթացքում: Այս տեսակետից Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այն փաստը, որ Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը սկսել է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այս խնդրին:

61. Խորհրդատվական կոմիտեն ուշադրություն է հրավիրում այլընտրանքային քաղաքացիական ծառայությունն անջ գոյություն ունեցող պայմաններին, որոնք կարող էին ներգործել ավելի շատ որոշ ազգային փոքրամասնություններ ներկայացնող անձանց վրա, քան բնակչության մեծամասնության: Ռուսախոս մալակաները ներկայացնող որոշ անձինք, ովքեր կրոնական պատճառներով հրաժարվում են զինվորական ծառայությունից, կարծում են, որ այլընտրանքային ծառայությունը, ինչպես հիմա է, չի ապահովում զինվորական ծառայությանը համապատասխան այլընտրանք, քանի որ այն համապատասխան չափով չի առանձնացվում զինվորական-կառավարման համակարգից:

Հանձնարարականներ

62. Խորհրդատվական կոմիտեն պահանջում է իշխանություններից առանձնահատուկ ուշադրություն դարձնել ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց նկատմամբ խտրականության հայտարարություններին և մանրակրկիտ ուսումնասիրել հնարավոր դեպքերը:

63. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին՝ աչալուրջ մնալու հնարավոր բռնությունների նկատմամբ, որոնք զինվորական ծառայության պայմաններում պատճառաբանված են էթնիկ ծագմամբ: Նույնպես առաջարկում է լրատվամիջոցներում էթնիկ ատելության բորբոքման հնարավոր դեպքերի մանրակրկիտ վերահսկում:

64. Եվ վերջապես, Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին՝ առավել զարգացնելու ազգային փոքրամասնությունների մշակույթն ու ինքնությունը և ընդհանրապես մշակութային բազմազանության վերաբերյալ գիտակցությունը բարձրացնող ծրագրերը:

Շրջանականին Կոնվենցիա, հոդված 9

Փոքրամասնությաններին և լրատվական միջոցների մատչելիությունը

Առաջին փուլի բացահայտումներ

65. Խորհրդատվական կոմիտեն իր առաջին կարծիքում քննարկում էր այն դիրքորոշումը, որ իշխանությունները պետք է ջանք չխնայեն՝ մեծացնելու փոքրամասնությանների լրատվական միջոցների մատչելիության հնարավորությունները և նրանց ներկայությունը լրատվամիջոցներում: Բացահայտվել էր նաև, որ հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը չափազանց սահմանափակում է փոքրամասնությունների լեզուների օգտագործումը հանրային հեռուստատեսությամբ, և, որ փոքրամասնությունների լեզուներով ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակումներին տրամադրված ժամաքանակը կավելացվի: Եվ վերջապես, բացահայտվել էր, որ պետությունը պետք է ավելացնի աջակցությունը փոքրամասնություններին՝ ստեղծելու իրենց մասնավոր թվային կամ տպագիր պարբերականները:

¹ Հակասեմիտական հայտարարությունների հեղինակը մեղադրվեց և դատապարտվեց պայմանական ազատազրկման երեք տարով՝ էթնիկ ատելություն բորբոքելու համար:

Ներկա զարգացումները
ա) Դրական զարգացումներ

66.Ռադիոհաղորդումներ են հեռարձակվում հանրային ռադիոյով եզդիերեն, քրդերեն, վրացերեն, ռուսերեն և ասորերեն լեզուներով: Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այն փաստը, որ ասորերեն լեզվով հաղորդումները, որ դադարեցվել էին 2003-ին, պետական աջակցությամբ վերսկսվել են 2006-ին: Ողջունվում է նաև այն, որ ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումները ծրագրավորվում և պատրաստվում են ազգային փոքրամասնություններ կայացնող լրագրողների և համայնքային առաջնորդների կողմից:

բ) Խնդիրներ

67.Խորհրդատվական կոմիտեն շարունակում է տարակուսել հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի 28-րդ հոդվածի այն սահմանափակմամբ, ըստ որի՝ փոքրամասնությունների լեզուներով հեռարձակվող հաղորդումները հեռուստատեսությամբ չպետք է գերազանցեն շաբաթական մեկ ժամը և օրական մեկ ժամը ռադիոյով:

68.Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ փոքրամասնությունների լեզուների առկայությունը լրատվամիջոցներում մնում է սահմանափակ, չնայած մի շարք հաղորդումներ նվիրված են կամ առնչվում են ազգային փոքրամասնություններին:

69.Ավելին, նկատվել է, որ չկան համակարգված միջոցներ՝ ներգրավելու ազգային փոքրամասնություններ կայացնող անձանց լրատվամիջոցների վերահսկման մարմիններ՝ ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով և Հանրային հեռուստաընկերության խորհուրդ:

70.Խորհրդատվական կոմիտեն իր այցելության ժամանակ տեղեկացվել է, որ չնայած օրենքը նախապատվություն չի ենթադրում, բայց մրցույթների ժամանակ նախապատվություն է տրվելու ազգային փոքրամասնությունների լեզուներով և ազգային փոքրամասնությունների կողմից ստեղծվող հաղորդումներին: Այնուամենայնիվ, Խորհրդատվական կոմիտեն տեղեկացվել է, որ պայմանավորված փոքրամասնությունների հեռուստատեսության և ռադիոյի ստեղծման և հեռարձակման համար անհրաժեշտ տնտեսական միջոցների սակավությամբ, մինչ այժմ ազգային փոքրամասնության ոչ մի ներկայացուցիչ չի դիմել՝ մասնակցելու մրցույթին: Այնուամենայնիվ, հատուկ մրցույթ է հայտարարվել հիմնականում Արագածոտնի մարզի քրդաբնակ և եզդիաբնակ գյուղերի համար:

71.Խորհրդատվական կոմիտեն իշխանությունների կողմից տեղեկացվել է, որ ազգային փոքրամասնությունների տնտեսական հնարավորությունների սակավության փոխհատուցում կարող է լինել արդեն գոյություն ունեցող ավիքների օգտագործումը՝ հեռարձակումը փոքրամասնությունների լեզուներով, և էթնիկ հայրենիքների ու հարևան երկրների հաղորդումների վերահեռարձակումը: Այնուամենայնիվ այս տարբերակը դժվար կլինի կիրառել այն փոքրամասնությունների համար, որոնք էթնիկ հայրենիք չունեն: Ավելին, Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ էթնիկ հայրենիքներում պատրաստված հաղորդումների հեռարձակումը ոչ միշտ է բավարարում ազգային փոքրամասնության պատկանող անձանց կարիքները:

72. Խորհրդատվական կոմիտեն տեղեկացվել է նաև, որ ի լրումն տնտեսական միջոցների սակավության, ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածության պակասը խոչընդոտում է նրանց առավել ակտիվ մասնակցությանը լրատվամիջոցների ստեղծման գործում:

Հանձնարարականներ

73.Խորհրդատվական կոմիտեն առաջարկում է իշխանություններին՝ վերացնելու ազգային փոքրամասնությունների լեզուներով հետագա հեռարձակումների խոչընդոտները, մասնավորապես այն իրավական սահմանափակումները, որ կան փոքրամասնությունների լեզուներով ռադիո և հեռուստահեռարձակումների ժամանակի վերաբերյալ, և խրախուսում իշխանություններին՝ փնտրելու ձևեր՝ ավելացնելու փոքրամասնությունների մասնակցությունը լրատվամիջոցների ստեղծմանը:

74.Խորհրդատվական կոմիտեն նաև խրախուսում է իշխանություններին՝ ազգային փոքրամասնություններին աջակցություն ցուցաբերելու դասընթացների միջոցով, պատրաստելու լրատվամիջոցների գծով մասնագետներ:

Փոքրամասնությունների լեզուների օգտագործումը գործադիր իշխանությունների հետ առնչություններում

Առաջին փուլի բացահայտումներ

75. Իր առաջին կարծիքում Խորհրդատվական կոմիտեն նշել էր, որ հայկական օրենսդրությունում բացակայում է փոքրամասնությունների լեզվի օգտագործման իրավունքը գործադիր իշխանության հետ հարաբերություններում և գտնում էր, որ պետք է միջոցներ ձեռնարկել երաշխավորելու, որ այդ հնարավորությունը չկիրառվեին բացառապես իշխանությունների հայեցողությամբ:

76. Խորհրդատվական կոմիտեին հայտնի էր դարձել, որ Լեզվի մասին հայկական օրենքով փոքրամասնությունների լեզուներին տրամադրված պաշտպանությունը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից գնահատվել է անբավարար: Կոմիտեն գտնում էր, որ շահագրգիռ մարդկանց հետ քննարկելով, պետք է միջոցներ ձեռնարկվե՞ր՝ բավարարելու ազգային փոքրամասնություններին պատկանող մարդկանց լեզվական կարիքները:

ա/ դրական զարգացումներ

77. Խորհրդատվական կոմիտեն գնահատում է 2004թ. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի ընդունումը, որը հաստատում է գործադիր իշխանության ներկայացուցիչների հետ փոքրամասնությունների լեզվի օգտագործման իրավունքը բանավոր և գրավոր՝ հայերեն թարգմանությունը կցելով: Թարգմանության ծախսերը պիտի հոգա իշխանությունը: Փոքրամասնության լեզվով դիմելը չի կարող հիմք հանդիսանալ դիմումի ընդունումը մերժելու համար: Բացի այդ, օրենքը կարգավորում է փոքրամասնության լեզվի օգտագործումը դատական գործընթացներում՝ դատարանում թարգմանչի անվճար ծառայությունից օգտվելու ձևով:

78. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ «Էթնիկ փոքրամասնությունների և այլէթնիկ քաղաքացիների մասին» օրենքի նախագիծը հաստատում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ պայմանը: Այն նաև իրավական հիմք է ապահովում փոքրամասնությունների լեզուների օգտագործման համար տեղական ինքնակառավարման մարմիններում այն դեպքերում, երբ փոքրամասնությունը տվյալ համայնքում կազմում է բնակչության առնվազն 15%-ը:

79. Խորհրդատվական կոմիտեն ընդունում է ի գիտություն, որ փոքրամասնությունների լեզուները գործնականում օգտագործվում են տեղական ինքնակառավարման մարմիններում այն դեպքերում, երբ տվյալ համայնքներում ապրում են փոքրամասնություններ, և, որ փոքրամասնությունների լեզուների օգտագործումը վարչական մարմինների հետ առնչվելիս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից խնդիր չէ:

բ/ Խնդիրներ

80. Չնայած վերոհիշյալ դրական զարգացումներին, Խորհրդատվական կոմիտեն նկատում է, որ տնտեսական դժվարությունների պատճառով փոքրամասնությունների լեզուների օգտագործման իրավունքի իրականացումը երբեմն հանդիպում է որոշ դժվարությունների, ներառյալ փաստաղթերի թարգմանության ծախսերը:

81. Խորհրդատվական կոմիտեն նշում է նաև, որ որևէ իրավական պարտավորություն և մեխանիզմներ չկան, որենք կերաշխավորեն, որ անհրաժեշտության դեպքում փոքրամասնությունների լեզուները անպայման բանավոր կօգտագործվեն գործադիր իշխանության ներկայացուցիչների կողմից, չնայած այն փաստին, որ ազգային փոքրամասնություններով բնակեցված այն համայնքներում, որտեղ փոքրամասնությունը կազմում է զգալի թիվ, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները հաճախ իսկապես ի վիճակի են խոսել փոքրամասնության լեզվով:

Հանձնարարականներ

82. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է, որ Հայաստանի իշխանությունները վարչական հարաբերություններում փոքրամասնությունների լեզուների օգտագործման վերաբերյալ շարունակեն իրականացնել բաց և իրատեսական քայլեր և լիովին իրականացնեն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով հաստատված իրավունքը:

Շրջանակային կոնվենցիա, հոդված 11

Փոքրամասնությունների լեզուների օգտագործումը տեղագրական ցուցանակների վրա

Առաջին փուլի բացահայտումներ.

83. Խորհրդատվական կոմիտեն իր առաջին կարծիքում քննարկել էր, որ չնայած շահագրգիռ անձանց կողմից բողոքներ չէին գրանցվել, այնուամենայնիվ, իշխանությունները պետք է հավելում անեն օրենսդրության մեջ՝ տեղագրական նշումներում փոքրամասնությունների լեզուների օգտագործման հնարավորությունը երաշխավորելու համար:

Ներկա իրավիճակ

Դրական զարգացումներ

84. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ճանապարհային երթևեկության նշանները և քաղաքների ու գյուղերի անվանատախտակները սովորաբար հայերեն լեզվով են, ինչպես նաև լատիներեն և հաճախ՝ նաև կիրիլիցայով:

85. Համաձայն Խորհրդատվական կոմիտեին ներկայացված տեղեկությունների, ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանցով բնակեցված տարածաշրջաններում մի շարք տեղագրական նշումներ ներկայումս ստացել են իրենց անվանումը տվյալ փոքրամասնության լեզվով: Ավելին, տեղական իշխանությունները, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձիք, այդ թվում՝ նաև ազգային փոքրամասնություններ ներկայացնող անձիք, կարող են բնակեցման վայրերի համար անուններ առաջարկել:

86. Ազգային փոքրամասնությունների օրենքի նախագիծը նախատեսում է, որ համայնքներում, որտեղ ազգային փոքրամասնությունները կազմում են բնակչության առնվազն 15%-ը, կներկայացվի օրինական երաշխավորություն երկլեզվանի ցուցանշանների օգտագործման համար:

բ) Խնդիրներ

87. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ներկայումս տեղագրական երկլեզու ցուցանշանների վերաբերյալ իրավական որևէ պարտավորություն չկա:

Հանձնարարականներ

88. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին՝ ունենալու ներառական խորհրդակցություն ազգային փոքրամասնությունների հետ՝ տեղագրական նշումներում ու ցուցանակներում ազգային փոքրամասնությունների լեզուների օգտագործման վերաբերյալ:

Շրջանակային կոնվենցիա, հոդված 12

Կրթության հավասար հնարավորություններ ազգային փոքրամասնություններին պատկանող մարդկանց համար

Առաջին փուլի բացահայտումներ

89. Խորհրդատվական Կոմիտեն իր առաջին կարծիքում մտահոգություն էր հայտնել կրթության ոլորտում ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց նկատմամբ ակտիվ պետական քաղաքականության բացակայության և այս հարցում պետության կողմից անբավարար աջակցություն ցույց տալու մասին: Խորհրդատվական Կոմիտեն գտնում էր, որ իշխանությունները պետք է ցույց տան ավելի մեծ պարտավորություն, որպեսզի երաշխավորեն, որ ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձիք կարող են ունենալ կրթության հավասար մատչելիություն և կարող են գիտելիքներ ստանալ իրենց մշակույթի, պատմության, լեզուների և ավանդույթների մասին:

90. Ավելին, Խորհրդատվական Կոմիտեն բացահայտել էր, որ որոշ դեպքերում եզրի երեխաները դպրոցում ենթարկվել են խտրական վերաբերմունքի:

Ներկա իրավիճակ

ա/ Դրական զարգացումներ

91. Առաջին կարծիքի հաստատումից հետո, կրթության ոլորտում ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց կարիքների մասին իրազեկությունն աճել է: Հանրակրթական դպրոցներում փոքրամասնությունների, հատկապես ասորիների և եզդիների լեզուներն ուսումնասիրելու ավելի շատ հնարավորություններ կան (Տես նաև 14-րդ հոդվածին վերաբերող ծանոթագրությունները): 2004 թվականին էթնիկ փոքրամասնությունների² առնչությամբ կատարվել է դպրոցական կրթության կարգավիճակի մանրակրկիտ ուսումնասիրություն, որը փոքրամասնության կրթության ոլորտում հիմք է հանդիսանում պետական քաղաքականություն մշակելու համար: Տրվում է մանրամասն տեղեկություն, այդ թվում՝ վիճակագրական տվյալներ, եզդի, քուրդ, ասորի և մալական երեխաների կարիքների ու կրթության կարգավիճակի վերաբերյալ: Խորհրդատվական Կոմիտեն ողջունում է նման դրական զարգացումները:

92. Փոքրամասնություններով խիտ բնակեցված վայրերում արվել են մի շարք դպրոցներ վերանորոգելու նախաձեռնություններ, չնայած շատ դպրոցների ֆիզիկական վիճակը մնում է չափորոշիչով սահմանվածից ցածր:

բ) Խնդիրներ

93. Խորհրդատվական Կոմիտեն մտահոգված է տնտեսական միջոցների պակասով պայմանավորված նախադպրոցական կրթական համակարգի մոտակա փլուզման հետևանքներով: Նախադպրոցական կրթությունը փոքրամասնությունների երեխաներին հնարավորություն էր ընձեռում սովորել այն լեզուն, որով նրանք հետագայում պետք է կրթություն ստանային: Ներկայումս շատ քիչ մանկապարտեզներ և նախադպրոցական հաստատություններ կան, որոնք բավարարում են փոքրամասնությունների երեխաների կարիքները: Արդյունքում եզդի, քուրդ կամ ասորի ծագում ունեցող շատ երեխաներ լիովին չեն տիրապետում հայերենին կամ ռուսերենին, երբ նրանք անդամագրվում են դպրոցներում, անկախ այն բանից, թե նրանք ընդգրկված են հայերեն թե ռուսերեն բաժնում³:

² «էթնիկ փոքրամասնությունների դպրոցական կրթության կարգավիճակ»-ի զեկույցը թողարկվել է 2004 թվականին Ազգաբնակչության Հայկական Կենտրոնի կողմից UNICEF-ի և Հայաստանի Կրթության և գիտության նախարարության հետ համատեղ:

³ Հայաստանում հանրակրթական դպրոցները հիմնել են համապատասխանաբար երկու ուղու համակարգ, և եթե կա անհրաժեշտություն և պահանջարկ, կարող է լինել և հայերեն բաժին և/կամ ռուսերեն բաժին, որը տալիս է ռուսերեն ուսուցում: Այն տարածաշրջաններում, որտեղ ապրում են մեծ թվով փոքրամասնություններ, ապա տրվում է փոքրամասնությունների լեզուների լրացուցիչ դասեր, ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն բաժնում: Սա վերաբերում է մեծամասամբ ասորերեն, եզդիերեն և քրդերեն լեզուների դասավանդմանը:

94. Խորհրդատվական Կոմիտեն գտնում է, որ հատկապես եզրինների և քրդերի միջավայրում աղջիկների շրջանում դպրոցը լքելու դեպքերը մտահոգության լուրջ առիթ է: Խորհրդատվական Կոմիտեն տեղեկացվել է, որ մշակութային պատճառներով և պայմանավորված վաղ ամուսնություններով, նրանք դպրոցը թողնում են շատ վաղ հասակում, հաճախ՝ մինչ ութերորդ պարտադիր ոսումնական տարվա ավարտը: Խորհրդատվական Կոմիտեն տեղեկացվել է քուրդ և եզրի աշակերտների բացակայությունների մասին, որոնք պայմանավորված են տնտեսական սեզոնային տեղաշարժերով, ինչպես նաև տեղեկացվել է մալակյան աշակերտների բացակայությունների մասին, որոնց հաճախ պահում են տանն աշխատելու նպատակով:
95. Խորհրդատվական Կոմիտեն նշում է, որ միջնակարգ և բարձրագույն կրթությանը եզրի, քուրդ ու մալակյան երեխաների մասնակցությունը մնում է շատ ցածր մակարդակի: Սա կապված է աշխատանք գտնելու դժվարությունների հետ՝ անկախ կրթության մակարդակից, ինչպես նաև այն փաստի հետ, որ ուսանողներն սկզբնական կուրսերում չեն տիրապետում կրթության լեզվին, ինչպես նաև, որոշ խմբերում, կրթության կարևորության գիտակցության բացակայությունից: Համաձայն այն տեղեկության, որ ստացել է Խորհրդատվական Կոմիտեն, տնտեսական դժվարությունները և եզրի աշակերտների նկատմամբ ոտնձգությունների օրինակները նույնպես նպաստում են նման իրավիճակին:
96. Ազգային փոքրամասնությունների մի շարք ներկայացուցիչներ Խորհրդատվական Կոմիտեի ուշադրությունը հրավիրեցին այն փաստին, որ իշխանությունների կողմից ոչ մի առանձնահատուկ օժանդակություն չի տրամադրվում չափահասներին հայերեն լեզուն սովորեցնելու համար:

Հանձնարարականներ

97. Խորհրդատվական Կոմիտեն հորդորում է իշխանություններին քայլեր ձեռնարկել՝ թույլատրելու նախադպրոցական կրթության վերականգնումն այն բնակավայրերում, որտեղ երեխաները տանը չեն խոսում կրթական լեզվով (հայերեն կամ ռուսերեն), հիմնականում մեկուսացված և եզրիններով խիտ բնակեցված բնակավայրերում:
98. Խորհրդատվական Կոմիտեն խիստ հորդորում է համապատասխան իշխանություններին աջակցելու դպրոց հաճախելիության բարձրացմանը և նվազեցնելու դպրոցը լքելու դեպքերի թիվը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով որոշ ազգային փոքրամասնություն ներկայացնող երիտասարդ կանանց և աղջիկների խնդրին:
99. Իշխանությունները պետք է նաև հետազայում աջակցեն ավելի բարձր կրթական հաստատություններում ազգային փոքրամասնությունների լեզուների դասավանդման գործընթացին:
100. Խորհրդատվական Կոմիտեն հորդորում է իշխանություններին՝ աջալուրջ լինել փոքրամասնական ծագում ունեցող աշակերտների, հատկապես՝ եզրինների հանդեպ կատարված, արձանագրված խտրականության և ոտնձգության դեպքերի վերաբերյալ:

Ուսուցիչների վերապատրաստում և դասագրքեր

Առաջին փուլի բացահայտումներ

101. Խորհրդատվական Կոմիտեն իր առաջին կարծիքում մտահոգություն էր հայտնել ուսուցիչների, հատուկ ուսումնական ծրագրերի ու դասագրքերի պակասի վերաբերյալ, որոնք ազգային փոքրամասնությունները ներկայացնող երեխաների համար նախատեսված դպրոցներում և մանկապարտեզներում հնարավորություն կընձեռնեն դասավանդել փոքրամասնական լեզուները:

Ներկա իրավիճակ

ա/ Դրական զարգացումներ

102. Կրթության և գիտության նախարարությունը հրատարակել է մեկ եզրդիրենն դասագիրք և տարրական դասարաններում ասորերեն դասավանդելու մեկ դասագիրք էլ պատրաստման գործընթացի մեջ է:
103. Կրթության և գիտության նախարարությունը 2003 թվականից ի վեր որոշակի օժանդակություն է տրամադրել ասորերեն լեզվի ուսուցիչների վերապատրաստմանը և տեղեկացրել Խորհրդատվական Կոմիտեին, որ 2007 թվականին կկազմակերպվի քրդերեն և եզդիերեն լեզուների ուսուցիչների վերապատրաստում:

բ) Խնդիրներ

104. Խորհրդատվական Կոմիտեն մտահոգված է ուսուցիչների վերապատրաստման հետ կապված իրավիճակով: Այս մտահոգությունը վերաբերում է և ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող ուսուցիչներին, և մեծ թվով փոքրամասնություն կազմող աշակերտներ ունեցող դպրոցների ուսուցիչներին, հատկապես գյուղական բնակավայրերում, որտեղ զգալի թվով ասորի, քուրդ, եզդի և ռուսախոս մալական փոքրամասնություններ են ապրում:
105. Փոքրամասնական ծագում ունեցող շատ քիչ ուսուցիչներ կան: Փոքրամասնությունների լեզուները սովորաբար նրանք են դասավանդում, բայց հաճախ սահմանափակ վերապատրաստում ունեն: Էթնիկ հայ ուսուցիչները հաճախ լավ չեն պատրաստված ասորի, քուրդ կամ եզդի փոքրամասնության աշակերտներին դասավանդելու համար, նրանց մեծ մասը գաղափար չունի համապատասխան փոքրամասնության լեզվի մասին: Փոքրամասնության լեզուների հետ կապված ուսուցիչների վերապատրաստումը պետք է արվի հենց իրենց՝ ազգային փոքրամասնությունների կողմից:
106. Խորհրդատվական Կոմիտեի այցելության ժամանակ բազմաթիվ զրուցակիցներ որպես լուրջ մտահոգություն հարց բարձրացրեցին փոքրամասնության լեզուներ դասավանդելու համար նախատեսված դասագրքերի քանակական ու որակական չափանիշների մասին: Ավելին, Խորհրդատվական Կոմիտեին տեղեկացրեցին, որ շատ ուսուցիչներ օգտագործում են ազգակից երկրների դասագրքերը, որոնք չեն համապատասխանում Հայաստանի կրթական ծրագրերին: Խորհրդատվական Կոմիտեն նաև նշում է, որ դպրոցներում առկա փոքրամասնության լեզուներով գրականության քանակն անբավարար է:
107. Խորհրդատվական Կոմիտեն նշում է, որ իշխանությունները բախվել են եզդի և քուրդ էթնիկ ծագում ունեցող փոքրամասնությունների միջև դասագրքերի վերաբերյալ ծագած վիճաբանության հետ: Խմբերը չեն հաջողացրել համաձայնության գալ մեկ ընդհանուր տառատեսակով դասագրքի կապակցությամբ: Որոշվել է հրատարակել եզդիերեն և Կիրիլիցայով մի դասագիրք, որը լավ չի ընդունվել քրդական համայնքների կողմից:

Հանձնարարականներ

108. Խորհրդատվական Կոմիտեն կոչ է անում իշխանություններին՝ փոքրամասնական ծագում ունեցող երեխաների հետ աշխատող ուսուցիչներին բարձրագույն կրթության մակարդակով տալու համապատասխան վերապատրաստում և որակավորման բարձրացում՝ աշխատանքին զուգընթաց: Կոչ է արվում նաև հետազայում էլ նպաստել ու աջակցել ազգային փոքրամասնությունների ուսուցիչների վերապատրաստման գործընթացին:
109. Խորհրդատվական Կոմիտեն խրախուսում է իշխանություններին՝ հատուկ ուշադրություն դարձնելու որակյալ դասագրքերի պատրաստման և բախշման վրա: Նա հավաստում է, որ այս հարցում ավելի ակտիվ մոտեցման կարիք կա:
110. Խորհրդատվական Կոմիտեն նաև քաջատեղյակ է քրդերեն/եզդիերեն դասագրքի հրատարակության հետ կապված բարդ իրավիճակի և ձեռագրերի օգտագործման առնչությամբ ծագած վիճաբանության մասին: Այնուամենայնիվ, այն խրախուսում է

իշխանություններին այս հարցում՝ բաց և ճկուն դիրքորոշում ցուցաբերելու և հնարավորինս հարմարեցնելու նրանց արձագանքը տարբեր համայնքների կարիքները հոգալու համար:

Շրջանակային կոնվենցիա, հոդված 14

Կրթությունը փոքրամասնությունների լեզուներով

Առաջին փուլի բացահայտումներ

111. Խորհրդատվական Կոմիտեն իր առաջին կարծիքում քննարկել էր, որ իշխանությունները պետք է աջակցության լրացուցիչ միջոցներ գտնեն հոգուտ փոքրամասնության լեզուների և այդ լեզուներով դասավանդելու գործընթացին, ներառելով այս հարցում ազգային փոքրամասնությունների ցուցաբերած օժանդակ նախաձեռնությունները: Լուսաբանվել էին ասորիներին ու եզդիներին հատուկ կարիքները:

Ներկա իրավիճակ

ա/ Դրական զարգացումներ

112. Խորհրդատվական Կոմիտեն ողջունում է այն փաստը, որ ասորերեն, եզդիերեն, քրդերեն լեզուները դպրոցում սովորելու հնարավորություններն առաջին Կարծիքից հետո աճել են: Այս ազգային փոքրամասնությունները ներկայացնող և ազգային փոքրամասնություններով խիտ բնակեցված բնակավայրերում ապրող երեխաները կարող են սովորել իրենց փոքրամասնության լեզուն, ինչպես նաև՝ որպես պարտադիր առարկա իրենց խմբի պատմությունը և մշակույթը, անկախ նրանից, թե ո՞ր բաժինն են հաճախում՝ հայերե՞ն, թե՞ ռուսերեն:

113. Խորհրդատվական Կոմիտեն ողջունում է այն փաստը, որ 19 դպրոցներ, որտեղ դասավանդվում են փոքրամասնության լեզուներ, պաշտոնապես ճանաչվել են որպես «պաշտպանված դպրոցներ», և այդ իսկ պատճառով ենթակա չեն դպրոցների ստորև նկարագրված «Ռացիոնալացման» գործընթացին: Այս հանգամանքներում նա ողջունում է այն փաստը, որ դասարան բացելու համար փոքրամասնական կրթության պահանջ ունեցող տարածքներում անհրաժեշտ 30 աշակերտների թվի շեմը իջեցվել է մինչև 5-ից 7 աշակերտների, հատկապես մեկուսացված գյուղական վայրերում:

բ) Խնդիրներ

114. Դասարանները փակելու և միացնելու համար ներկայացվեց դպրոցների «Ռացիոնալացման»⁴ գործընթացը՝ կրթական համակարգը բնակչության համատարած նվազմանը և ֆինանսական ճնշումներին հարմարեցնելու նպատակով: Պետության ֆինանսավորումն այժմ տրամադրվում է՝ համաձայն դպրոց հաճախող աշակերտների քանակի և ոչ թե՝ համաձայն դասարանների քանակի: Ավելին, դասարան բացելու համար անհրաժեշտ 30 աշակերտների շեմի առաջարկ է ներկայացվել: Ինչևէ, մի շարք «Պաշտպանված դպրոցների» համար բացառություններ արվում են, ինչպես նշված էր 113-րդ պարագրաֆում, որոնք շարունակում են ֆինանսավորում ստանալ ըստ դասարանների քանակի: Այնուամենայնիվ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները մտահոգություն են հայտնել, որ ոչ բոլոր փոքրամասնության լեզու դասավանդող դպրոցներն են «պաշտպանված դպրոցներ» համարվում, որը կարող է ավելի դժվարացնել փոքրամասնության լեզուներ դասավանդող դասարանների պահպանման համար անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու գործընթացը և այդ իսկ պատճառով խոչընդոտել փոքրամասնության լեզուների ուսուցմանը նպաստող ջանքերին:

⁴ «Ռացիոնալացում»-ը տերմին է, որն օգտագործվում է Հայաստանի իշխանությունների կողմից:

115. Խորհրդատվական Կոմիտեն տեղեկացվեց, որ ազգային փոքրամասնությունները ներկայացնող մի շարք անձիք, այդ թվում՝ ոչ ռուսական էթնիկ ծագում ունեցող փոքրամասնություններն իրենց երեխաների համար առավելությունը տալիս են ռուսերեն կրթությանը: Խորհրդատվական Կոմիտեն իրազեկ է համատարած ծողովրդագրական վատթարացման և Ռուսաստանի Դաշնություն արտագաղթելու հետ կապված խնդիրներին: Այնուամենայնիվ, Խորհրդատվական Կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունների մի մասը ռուսերենը ճանաչում է որպես իրենց գերադասելի լեզու և վախ են հայտնում, որ հայերեն կրթության վրա շեշտը դնելու պարագան կարող է բացասաբար ազդել իրենց վրա:

116. Խորհրդատվական Կոմիտեն նշում է, որ պետությունը, բացի եզդիերեն, քրդերեն, ասորերեն և ռուսերեն լեզուներից, սահմանափակ աջակցություն է տրամադրել մյուս փոքրամասնական լեզուների դասավանդման համար: Մյուս ազգային փոքրամասնական համայնքները (հույն, բելառուս, գերմանացի, հրեա), իրենց լեզվի ուսուցանման գործընթացը ապահովում են կիրակնօրյա դպրոցների և այլ նախաձեռնությունների միջոցով, որոնք որպես կանոն աջակցվում են իրենց էթնիկ հայրենիքների կողմից:

117. Խորհրդատվական Կոմիտեն նաև նշում է, որ ազգային փոքրամասնության լեզուներով ամբողջական ուսուցում չկա, բացի ռուսերենից, որովհետև ըստ իշխանությունների՝ ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց մեծ մասը սփռված է Հայաստանի տարածքով մեկ:

Հանձնարարականներ

118. Խորհրդատվական Կոմիտեն խրախուսում է իշխանություններին հավաստիանալու, որ «Ռացիոնալացման» գործընթացը չի խոչընդոտում քրդերեն, ասորերեն, եզդիերեն և ռուսերեն լեզուների դասավանդմանը: «Պաշտպանված դպրոցների» կարգավիճակ շնորհելու ողջունելի սովորույթն ազգային փոքրամասնության լեզուներ դասավանդող դպրոցներին և դասարան բացելու համար անհրաժեշտ 30 աշակերտների շեմն ապահովելու անհաժեշտությունից ազատելու գործընթացը պետք է շարունակվի:

119. Խորհրդատվական Կոմիտեն խրախուսում է իշխանություններին՝ պատշաճ կերպով հաշվի առնելու կրթության լեզվի կապակցությամբ մտահոգված մարդկանց նախապատվությունները: Իշխանությունները պետք է ջանան արձագանքել ազգային փոքրամասնությունները ներկայացնող այն անձանց հատուկ կարիքներին, որոնք ռուսերեն լեզուն են ընտրում որպես իրենց կրթության լեզու, և հավաստիացնում են, որ ընտրություն կատարելիս չեն գտնվում անբարենպաստ վիճակում⁵:

120. Խորհրդատվական Կոմիտեն իրազեկ է Հայաստանի իշխանությունների առջև ծանրացած տնտեսական լարվածության մասին: Այնուամենայնիվ, նա խրախուսում է նրանց՝ առիթի դեպքում ավելի շատ աջակցություն ցուցաբերելու, բացի ռուսերեն, ասորերեն, քրդերեն և եզդիերեն լեզուներից, նաև՝ մյուս փոքրամասնությունների լեզուների դասավանդման գործում, և այս հարցում հետագայում էլ օժանդակելու ազգային փոքրամասնությունների նախաձեռնություններին (Տես նաև 12-րդ հոդվածին վերաբերող ծանոթագրությունները):

Շրջանակային կոնվենցիա, հոդված 15

Խորհրդակցական մեխանիզմներ

Առաջին փուլի բացահայտումներ

⁵ Տես ծանոթագրություն Կրթության վերաբերյալ Ազգային Փոքրամասնությունների Պաշտպանության Շրջանակային կոնվենցիայի մեջ:

121. Խորհրդատվական Կոմիտեն իր առաջին կարծիքում քննարկել էր, որ կառավարական մարմին ստեղծելու անհրաժեշտություն կա, որը պատասխանատու կլինի փոքրամասնությունների հիմնախնդիրների համար և այս ասպարեզում կօգնի հետևողական ռազմավարության զարգացմանը: Խորհրդատվական Կոմիտեն քննարկել էր նաև, որ իշխանությունները պետք է անմիջական կապ պահպանեն տարբեր փոքրամասնություններ ներկայացնող կազմակերպությունների հետ՝ ի լրացում հաղորդակցության միջոցով հատուկ խորհրդակցական միջոցների:

Ներկա իրավիճակ

ա/ Դրական զարգացումներ

122. Խորհրդատվական Կոմիտեն ողջունում է 2004 թվականին Կրոնի հարցերի և ազգային փոքրամասնությունների գերատեսչության հիմնումը և անձնակազմում փոքրամասնական ծագում ունեցող անձանց ներառելու ջանքերը: Չնայած սահմանափակ միջոցներին, գերատեսչությունը դրական դեր է խաղացել ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց իրավունքների իրազեկության և փոքրամասնության հիմնախնդիրները կառավարությունում ներկայացնելու հարցում: Խորհրդատվական Կոմիտեն իրազեկ է, որ գերատեսչությունը հաջողացրել է շահագրգիռ նախարարությունների հետ համատեղ շահել մի շարք ռեալ խնդիրներ: Խորհրդատվական Կոմիտեն նաև ողջունում է ազգային փոքրամասնությունների համայնքներում կանանց և երիտասարդներին մոբիլիզացիայի ենթարկելու գերատեսչության ջանքերը:

123. Խորհրդատվական Կոմիտեն ողջունում է Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորության տակ գտնվող Ազգային Փոքրամասնությունների համակարգող խորհրդին տրամադրվող շարունակական աջակցությունը: Այս խորհրդի դերը ազգային փոքրամասնությունների հետաքրքրություններն ու նտահոգություններն իշխանություններին փոխանցելն է: Նմանատիպ մի խորհրդակցական մարմին էլ դեր է խաղում Ազգային Ժողովի ներսում:

բ) Խնդիրներ

124. Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները տեղեկացրել են Խորհրդատվական Կոմիտեին, որ իրենց նտահոգություններն իշխանությունների որոշումներում միշտ չէ, որ բավարար արձագանք են ստանում, հատկապես փոքրամասնությունների օրինագծի հետ կապված խորհրդակցություններում:

125. Մտահոգություններ արտահայտվեցին նաև փոքրամասնությունների օրինագծի դրույթների կապակցությամբ՝ փոքրամասնությունների ներկայացուցչության և իշխանությունների հետ ունեցած վերջիններիս հաղորդակցության վերաբերյալ: Անշուշտ, փոքրամասնությունների օրինագիծը նախատեսում է ինքնակառավարման մարմինների հիմնում՝ ընտրված ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց կողմից, և հայտարարում է, որ միայն այս ընտրված մարմիններն ապագայում «իրավասու կլինեն էթնիկ փոքրամասնությունների անունից խոսելու և նրանց հետաքրքրությունները ներկայացնելու գործընթացում»: Խորհրդատվական Կոմիտեն իրազեկ է փոքրամասնությունների բազմազան ոչ կառավարական կազմակերպությունների հետ երկխոսության հաստատման բարդ խնդիրների մասին: Այնուամենայնիվ, Խորհրդատվական Կոմիտեն այն կարծիքին է, որ փոքրամասնությունների կազմակերպությունների հետ հաղորդակցման միջոցների սահմանափակումը կարող է խոչընդոտել փոքրամասնությունների հետ հատուկ կապ պահպանելուն ուղղված իշխանությունների ջանքերին: Այդ իսկ պատճառով, Խորհրդատվական Կոմիտեն հավաստում է, որ չնայած այս ընտրված մարմինները պետք է իշխանությունների համար անփոխարինելի գործընկերներ լինեն, նրանք չպետք է համարվեն բացառիկ զրուցակից:

Հանձնարարականներ

126. Խորհրդատվական Կոմիտեն խրախուսում է իշխանություններին շարունակել աջակցել Ազգային Փոքրամասնությունների համակարգող խորհրդին և երաշխավորել, որ առիթի դեպքում վեջինիս տեսակետներն ըստ պատշաճի հաշվի են առնվում համապատասխան իշխանությունների կողմից:

127. Խորհրդատվական Կոմիտեն խրախուսում է իշխանություններին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ երկխոսությունը պահպանել՝ պայմանավորված վերջիններիս բազմազանությամբ:

Ներկայացուցչություն ընտրված մարմիններում

Առաջին փուլի բացահայտումներ

128. Խորհրդատվական Կոմիտեն բացահայտել էր, որ հասարակական գործերում ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց արդյունավետ մասնակցությունը երաշխավորելու համար դեռ պահանջվում են լուրջ ջանքեր:

Ներկա իրավիճակ

ա/ Դրական զարգացումներ

129. Խորհրդատվական Կոմիտեն տեղեկացվեց, որ ապակենտրոնացման գործընթացն ու համայնքների միավորում ձևավորելու հնարավորությունը կարող են դրական ազդեցություն ունենալ փոքրամասնությունների համար մասնակցելու տեղական ինքնակառավարման գործընթացին՝ ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանցով խիտ բնակեցված տարածքներում:

130. Խորհրդատվական Կոմիտեն հետաքրքրությամբ նշում է, որ փոքրամասնությունների օրինագիծը նախատեսում է տեղական մասշտաբով լուծել ներկայացուցչական խնդիրը՝ երաշխավորելով, որ այն վայրերում, որտեղ ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց թիվը կազմում է բնակչության առնվազն 15%-ը, նրանք պետք է տեղական համայնքում ներկայացուցիչ ունենան: Եթե ներկայացուցիչը չի ընտրվում, ապա նշանակվում է:

բ) Խնդիրներ

131. Խորհրդատվական Կոմիտեի հետ հանդիպած ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մեծ մասը շարունակում էին դժգոհել հասարակական գործերում իրենց մասնակցության աստիճանից, և հատկապես ընտրական մարմիններում իրենց սահմանափակ ներկայությունից՝ մասնավորապես ազգային մակարդակով: Որոշ ներկայացուցիչներ Ազգային ժողովում ազգային փոքրամասնությունների ներկայացուցչությունն ապահովելու համար առավելություն են տալիս արտոնություն տվեցին քվոտաների կամ նախապես պատվիրված տեղերի համակարգին:

132. Խորհրդատվական Կոմիտեն գրանցում է ազգային փոքրամասնությունների արտահայտած մտահոգությունները՝ տեղական համայնքներում փոքրամասնությունների ներկայացուցիչներ նշանակելու վերը նշված գործընթացի կապակցությամբ, որը կարող է հանգեցնել փոքրամասնությունների ներկայացուցիչների անկախությանը, ինչպես նախատեսված է օրինագծում:

133. Խորհրդատվական Կոմիտեն խրախուսում է իշխանություններին միջոցներ մշակել ընտրական մարմիններում ազգային փոքրամասնությունների ներկայացուցչությունը բարելավելու համար՝ հատկապես ազգային մակարդակով: Խորհրդատվական Կոմիտեն նաև հրավիրում է իշխանություններին այլընտրանքային միջոցներ ձեռք առնել՝ տեղական ընտրական մարմիններում ազգային փոքրամասնությունների ներկայացուցչությունը նշանակելու գործընթացը ժողովրդավարական սկզբունքներով իրականացնելու:

Շրջանակային կոնվենցիա, հոդված 17

Երկքաղաքացիության հնարավորությունները

Ներկա իրավիճակ

134. Խորհրդատվական Կոմիտեն ողջունում է 2005 թվականի սահմանադրական բացփոխումներում երկքաղաքացիության ընդունման փաստը: Այս զարգացումը պետք է նպաստի ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց և իրենց էթնիկ հայրենիքների միջև հարաբերությունների բարելավմանը:

Հանձնարարականներ

135. Խորհրդատվական Կոմիտեն հորդորում է իշխանություններին բարեհաճ լինել սահմանադրական բացփոխումների իրավական իրականացմանը, աջակցելով երկքաղաքացիության անխտրական հայեցակարգին այնպես, որպեսզի ներառվեն նաև ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց շահերիը:

Շրջանակային կոնվենցիա, հոդված 18

Անդրսահմանային համագործակցություն

Առաջին փուլի բացահայտումներ

136. Խորհրդատվական Կոմիտեն իր առաջին կարծիքում հույս էր արտահայտել, որ ազնիվ ու երկարատև քաղաքական կարգավորում կերաշխավորվի հարևան երկրների հետ առկա խնդիրները լուծելու համար, որը բխում է նաև անդրսահմանային համագործակցության միջոցով ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց շահերը պաշտպանելուց:

137. Խորհրդատվական Կոմիտեն ողջունել էր նաև այն փաստը, որ Հայաստանը կողմնակից է ազգային փոքրամասնությունների պաշտպանման մի շարք երկկողմ պայմանագրերի ու մշակութային համաձայնագրերի կնքմանը և խրախուսել էր իշխանություններին երաշխավորելու, որ այս համաձայնագրերի կատարումը կնպաստի ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց պաշտպանման բարելավմանը:

Ներկա իրավիճակ

Խնդիրներ

138. Խորհրդատվական Կոմիտեն մտահոգությամբ նշում է, որ Լեռնային Ղարաբաղի հետ կապված կոնֆլիկտը խոչընդոտում է տարածաշրջանի համընդհանուր անդրսահմանային համագործակցությանը և ցավում է, որ մինչ այժմ խնդրին քաղաքական լուծում չի տրվել:

Հանձնարարականներ

139. Խորհրդատվական Կոմիտեն հույս է տածում, որ կողմերի միջև բարելավված հարաբերությունները և խնդրի արդար ու կայուն լուծումը անդրսահմանային հարաբերությունների համար նոր հնարավորություններ կբացեն և հնարավորություն կընձեռեն կոնֆլիկտի պատճառով տարահանված անձանց կամավոր վերադառնալու իրենց հայրենի հողերը:

140. Խորհրդատվական Կոմիտեն խրախուսում է իշխանություններին շարունակելու կնքել ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց պաշտպանությունը բարելավելուն ուղղված երկկողմ պայմանագրեր և այլ համաձայնագրեր:

I. Եզրափակիչ դիտողություններ

141. Խորհրդատվական Կոմիտեն համարում է, որ առկա եզրափակիչ դիտողությունները կարող են հիմք ծառայել Նախարարների Կոմիտեի կողմից հաստատված Հայաստանի վերաբերյալ դիտողությունների և հանձնարարականների համար:
142. 2002 թվականի Մայիսի 16-ի Խորհրդատվական Կոմիտեի առաջին կարծիքի հաստատումից և 2003 թվականի Հունվարի 15-ի Նախարարների Կոմիտեի բանաձևից ի վեր Հայաստանը շատ միջոցների է դիմել Շրջանակային կոնվենցիայի իրականացումը բարելավելու ուղղությամբ: Այն ներառում է ինչպես ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց ուղղակի խնդիրների լուծումներին ուղղված ինստիտուցիոնալ և օրենսդրական մի շարք զարգացումներ, այնպես էլ՝ գործնական փոփոխություններ:
143. Ինստիտուցիոնալ և օրենսդրական զարգացումները ներառում են Մարդու Իրավունքների Օմբուդսմենի Գրասենյակի ստեղծումը: Առաջին Օմբուդսմենը մեծ ուշադրություն է դարձրել խտրականության հարցերին, այդ թվում՝ էթնիկ պատկանելության վրա հիմնված խտրականության, և դարձել է կարևոր իրավական պաշտպանության միջոց և փոքրամասնությունների իրավունքների գիտակցությունը բարձրացնող աղբյուր:
144. Ավելին, 2004 թվականին հիմնվել է ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերով վարչությունը, որը նախաձեռնել և համաձայնեցրել է պետական-քաղաքականություն ազգային փոքրամասնություններին առնչվող հարցերի վերաբերյալ: Այս գերատեսչության կողմից է պատրաստվել «Հայաստանի Հանրապետության էթնիկ փոքրամասնությունների և ազգությամբ ոչ հայ քաղաքացիների վերաբերյալ» օրինագիծը, շահագիգիռ անձանց հետ խորհրդակցելուց հետո:
145. Գործադրվել են ջանքեր փոքրամասնության մտահոգությունների նկատմամբ ուշադրությունը մեծացնելու և ազգային ծրագրերում փոքրամասնության խնդիրները տարածելու առնչությամբ, հատկապես մշակույթի ոլորտում: Ավելին, լրացուցիչ աջակցություն է ցույց տրվել այն գործունեություններին, որոնց նպատակն է նպաստել ազգային փոքրամասնությունների մշակույթին, լեզվին և ավանդույթներին: 2004 թվականին վարչական մարմինների հետ բարելավվել է փոքրամասնության լեզվի օգտագործման համար իրավական հիմքը:
146. Արվել են լրացուցիչ քայլեր կրթության ոլորտում ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց կաիքներն արձագանքելու համար: Իշխանությունները նաև միջոցներ են ձեռք առել՝ երաշխավորելով, որ դպրոցների «Ռացիոնալացման» ընթացող գործընթացը չի խոչընդոտի փոքրամասնության լեզվի կրթությունը:
147. Իշխանությունները շարունակում են աջակցել Ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդին և ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերով վարչությունը ջանացել է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ հետագա աշխատանքային հարաբերությունները կարգավորելու և զարգացնելու ուղղությամբ:
148. Չնայած Հայաստանը բարելավել է ազգային փոքրամասնությունների պաշտպանության իր համակարգված և իրավական համակարգը, այնուամենայնիվ ֆինանսական դժվարությունները ազգային փոքրամասնությունների պաշտպանության առնչությամբ ներգործում են շատ ոլորտների վրա և ազդեցություն ունեն իշխանությունների կողմից հաստատված միջոցների արդյունավետ իրականացման վրա: Ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց հավասար հնարավորությունները մեծացնելու համար պետք են լրացուցիչ նախաձեռնություններ: Պետք է անդրադառնալ նաև տարբեր ազգային փոքրամասնությունների նկատմամբ պետական աջակցության առկա անհավասարությանը:

149. Չնայած հանդուրժողականության համընդհանուր մթնոլորտը շարունակում է գերակշռել Հայաստանում, սակայն կարևոր է, որ իշխանություններն աշխուրջ լինեն էթնիկ ծագման վրա առաջացող խտրականության առնչությամբ, հատկապես եզդի համայնքը ներկայացնող անձանց դեմ ուղղված: Ավելի մանրամասն տեղեկությունները, այդ թվում վիճակագրական տվյալները, կօգնեն նրանց կարգավիճակը լավացնելուն ուղղված հետագա միջոցների ծրագրավորման գործընթացին:

150. Փոքրամասնությունների և փոքրամասնության լեզուների առկայությունը շատ սահմանափակ է լրատվամիջոցներում և զգալի իրավական սահմանափակումներ հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ փոքրամասնությունների լեզուների օգտագործման առնչությամբ:

151. Չնայած կրթության միջոցով փոքրամասնությունների լեզուների պահպանմանն ուղղված նախաձեռնություններին, փոքրամասնության լեզուների ուսուցման առնչությամբ շարունակում են ներկայացվել որոշ թերություններ: Այս թերությունները ներառում են որակյալ ուսուցիչների և դասգրքերի անբավարար առկայությունը փոքրամասնության լեզուների կրթության համար, ինչպես նաև նախադպրոցական կրթության և որոշ փոքրամասնության խմբերի աշակերտների դպրոցից հեռանալու հաճախականությունը, հատկապես աղջիկների և երիտասարդ կանանց շրջանում: Ավելին, ազգային փոքրամասնությունները ներկայացնող շատ անձիք, այդ թվում ոչ ռուսական էթնիկ ծագման, ովքեր իրենց երեխաների համար առավելությունը տալիս են ռուսերեն կրթությանը, մտահոգություններ են արտահայտել հայերեն կրթության նկատմամբ մեծացող ուշադրության առնչությամբ:

152. Ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց մասնակցությունը շարունակում է սահմանափակ մնալ հասարակական գործերում՝ մասնավորապես ազգային մակարդակով:

153. «Հայաստանի Հանրապետության էթնիկ փոքրամասնությունների և ազգությամբ ոչ հայ քաղաքացիների վերաբերյալ» օրենքի նախագիծը արժանացել է քննադատության ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից: Քննադատվել է մասնավորապես օրենքի նախագծի այն հայեցակետը, ըստ որի կարող են սահմանափակվել իշխանությունների հետ ազգային փոքրամասնությունների երկխոսության հնարավորությունները:

154. Լեռնային Ղարաբաղի հետ կապված կոնֆլիկտից ծագած խնդիրները շարունակում են խոչընդոտել տարածաշրջանի համընդհանուր անդրսահմանային համագործակցությանը՝ ներգործելով նաև ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց վրա:

Հանձնարարականներ

155. Ի լրացում խորհրդատվական Կոմիտեի կարծիքի առաջին և երկրորդ բաժնում ընդգրկված մանրամասն հանձնարարականների իրականացմանն ուղղված միջոցներին, իշխանություններին կոչ է արվում Շրջանակային Կոնվենցիայի հետագա իրականացումը բարելավելու համար ձեռնարկել հետևյալ միջոցները.

- Խթանել հասարակության, քաղաքական գործիչների և լրատվության շրջանակներում ազգային փոքրամասնությունների մասին գիտակցությունը բարձրացնող միջոցների մեծացմանը,

- Լուծումներ գտնել լրատվամիջոցներում փոքրամասնությունների մասնակցությունը մեծացնելու և վերացնելու հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ փոքրամասնությունների լեզուների հեռարձակման օրենսդրական խոչընդոտները,

- Շարունակել աջակցել ազգային փոքրամասնությունների հետ խորհրդակցելու մեխանիզմներին՝ նրանց բազմազանությանը պատշաճ ուշադրությամբ

- Ավելացնել որակյալ ուսուցիչների և դասագրքերի բավարար առկայությունը փոքրամասնության լեզուների կրթության համար ապահովող նախաձեռնությունները, միջոցներ ձեռնարկել նախադպրոցական կրթության ստեղծման համար մասնավորապես այն տարածաշրջաններում, որտեղ ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձիք ապրում են մեծ քանակով, վճռական գործողություններ ձեռք առնել նվազեցնելու որոշ փոքրամասնությունների աշակերտների կողմից դպրոցից հեռանալու հաճախականությունը,
- Երաշխավորել, որ հայերեն լեզվի ուսուցման նկատմամբ մեծացող ուշադրությունը չի խոչընդոտի ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց կողմից ռուսերեն լեզվով կրթություն ընտրելու հնարավորությունը,
- Ձեռնարկել էթնիկ ծագման վրա հիմնված խտրականության դեպքերի ավելի պարբերական վերահսկում,
- Ապահովել, որ ազգային փոքրամասնությունների մասին ցանկացած առաջիկա օրենք ամբողջությամբ համապատասխանի Շրջանակային Կոնվենցիայի պայմաններին: